

ԽԱՉԱՏՈՒՐ ԱՅՈՎԵԱՆ

I

Խաչ. Աքովեանի, ինչպէս և մեր բոլոր հեղինակներէ, երկերն ուսումնասիրելու ժամանակ ոմանք ուշադրութիւն են դարձնում՝ դրուածքի տեխնիկայի, ոմանք՝ գեղարուեստական լինելու, միւսները՝ լեզուի, ուրիշները՝ ոճի վերայ և այլն. սակայն մինչև այժմ ամենևին նպատակ չեն դրել պարզաբանելու, թէ ինչ կապ կայ մի կողմից՝ երկերի բովանդակութեան և հեղինակի աշխարհահայեացքի և միւս կողմից՝ հասարակական դարգացման, աւելի որոշ ասենք, տնտեսական առաջադիմութեան և հասարակական խմբերի դրութեան ու յարաբերութեան միջև:

Շատերը հէնց վերջին խնդրի համար կարող են առարկել ու հարց տալ, թէ արդեօք այդպիսի կապ գոյութիւն ունի: Միթէ սր և է առնչութիւն ունեն հպարտ մէոգալի արիւնոտ սուրն ու շառաչող՝ մտրակը, քրտնաջան երկրագործի փայլուն արօրն ու հատու բահը, ընչաքաղց առևտրականի արագասահ արշինն ու ազմկող համրիչը, հեռատես արդիւնաբերողի անդուլ մեքենան և մրտա բանուորի ջլուտ բազուկը պատմագրի՝ արհաւիրքներով լի դրուածքի, բանաստեղծի ոլորուն ու անուշ երգի, վիպասանի հրապուրիչ բոմանի և թատերագրի ցնցող դրամայի հետ:

Առնչութիւն ունեն և այն էլ շատ մեծ, սակայն այս աչքի չէ ընկնում ի միջի այլոց նաև այն պատճառով, որ գրականութեան պատմագիրները իւրաքանչիւր հեղինակի վերցնում են առանձնակի, չէզոքացրած դրութեամբ և չեն գործադրում բոլոր գիտութիւնների մէջ ընդունուած ուսումնասիրութեան մի մեթոդ—համեմատականը, որը իսկոյն երևան է հանում՝ նախ՝ տարբեր շրջանների երկերի ընդհանուր ու էական յատկութիւնները և երկրորդ՝ նրանց ու միջավայրի դրութեան կապը:

Եթէ համեմատենք երկար ժամանակամիջոցում երևան

եկող բազմաթիւ հեղինակների, կնիւտներ, որ գրականութիւնը կարելի է բաժանել, օրինակ, այսպիսի շրջանների. մի շրջան, երբ երկերի բովանդակութիւնը և իդէալները վերցուած են ազնուական (աշխարհիկ և հոգեւոր) դասակարգի կեանքից. մի ուրիշ շրջան, երբ հետաքրքրութեան կենդրոնը գիւղացիութիւնն է. երրորդ, երբ ուշագրութիւն են դարձնում քաղաքային ազգաբնակչութեան, մասնաւորապէս նրա մի տարրի—առևտրականների ու արգիւնաբերողների վերայ. և ապա չորրորդ, երբ գրողին նիւթ ու աշխարհահայեացք է մատակարարում բանւորութիւնը։ Գրականութեան մէջ այդ փաստը դիտելուց յետոյ եթէ աշխատենք հասարակական կեանքն ուսումնասիրել, կտեսնենք, որ վերջինս էլ ունի ֆազեր. երբ այդ դասակարգերը նոյն կարգով հղօրանալով յաջորդում են միմեանց։ Այնուհետև մեր ուշագրութիւնը կգրաւի հետեւեալ իրողութիւնը. այն է, որ հասարակական կեանքի մէջ որևէ դասակարգի հղօրանալը միշտ ժամանակագրական կարգով աւելի առաջ է ընկնում, քան նոյն դասակարգի պատկերացումն ու իդէալների արտայայտումը գրականութեան մէջ։ Այս ապացուցանում է նախ այն, որ ժողովրդի տնտեսական—սոցիալական զարգացումը և գրականութիւնը մեծ կապ ունեն միմեանց հետ և երկրորդ, որ տնտեսական—սոցիալական առաջագիմութիւնն է գրականութեան զարգացման պատճառը. և ոչ ընդհակառակը։ Եթէ վերջինը լինէր, պարզ է, որ առաջ պէտք է գրականութիւնը փոփոխուէր և յետոյ կեանքը, որովհետև պատճառը միշտ նախորդում է հետեւեանքին։

Ասածներից հետևում է, որ գրականութեան որ և է ճիշդի մի փոքրիկ օղակը կազմող իւրաքանչիւր երկի քննութեան ժամանակ հետադօտութիւնը պէտք է սկսել իբրև պատճառ ներկայացող հանգամանքների, այն է՝ սոցիալական միջավայրի ուսումնասիրութիւնից և ապա անցնել հետեւեանքին, այսինքն երկի բովանդակութեանն ու հեղինակի՝ դէպի ժամանակակից կեանքի երևոյթներն ունեցած վերաբերմունքին։

Այս տեսակէտով էլ առաջնորդուելով անցնենք Արուսեանի գլուխ-գործոցի—«Վէրք Հայաստանի» համառօտ վերլուծութեանը:

II

Արուսեանը ծնուել է 1804—1805 թուականին, իսկ «Վէրք Հայաստանին» գրուած պատրաստ է եղել 1841-ին: Նշանակում է վէպի գրութեան ժամանակ հեղինակը ազգուած է եղել 19-րդ դարի առաջին տասնամեակների հայ հասարակութեան կեանքից: Իսկ այս ժամանակ ինչ դասակարգեր գոյութիւն ունէին հայ աշխարհում և ինչ գրութեամբ:

Քաղաքական կեանքի փրփրագէղ յորձանքները, օտար ազգերի՝ դարեր շարունակ տեղը հալածանքը արգէն վաղուց խորտակել էին այն ամբարտակը, որի անունն էր հայ ազնուականութիւն: Հին հայ կեանքի տիրապետող երկու դասակարգերից մնացել էր միմիայն հոգևորականութիւնը:

Կար մի ժամանակ, երբ հոգևորականութիւնը հզօր էր ոչ միայն թուով, այլ և տնտեսապէս: Վանքերն ու եկեղեցիները ունէին իրենց ընդարձակ կալուածները, հոգևորականութիւնը հարուստ էր, որովհետեւ ստանում էր ոչ միայն եկեղեցուն պատկանող կալուածների արգիւնքը, այլ և մեծ բաժին բոլոր պատերազմների հարուստ աւարից, առատ նուէրների ազնուական դասից և ոչ նուազ տուրքեր ժողովրդի միւս շերտերից: Տնտեսապէս հզօրութիւնը պատճառ էր նրա մեծ ազդեցութեանը նաեւ ոչ—հոգևոր, քաղաքական և հասարակական առարկի դուռ:

Իսկ մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում: Նա ընկած է տնտեսապէս, որովհետեւ զրկուել է այն բոլոր կալուածներից, որոնք մի ժամանակ պատկանում էին եկեղեցիներին: Վանքերի ընդարձակ գոյքերից համարեա ոչինչ չէ մնացել: Ազնուական դասակարգի ոչնչանալը զրկել է նրան եկամուտի նշանաւոր աղբիւրից: Նրան կերակրում է հասարակ ժողովուրդը, գլխաւորապէս գիւ-

դացիութիւնը, որի համար չէր կարող զգալի չլինել այդ ծանրութիւնը:

Մարդ չէ կարող առանց մեծ յուզմունքի կարդալ Յարութիւն Արարատեանի ինքնակենսագրութեան այն էջերը, որտեղ նկարագրուած են գիւղական հասարակութեան հետ շփումն ունեցող վարդապետների անգթութիւնները: Թէև այդ նկարագրութիւնը վերաբերում է 18-րդ դարի վերջին տարիներին, բայց այնուամենայնիւ առանց սխալների մէջ ընկնելու կարելի է նոյնը ասել նաև մի երկու տասնամեակ յետոյ եկող ժամանակամիջոցի համար, որովհետև անհաւանական է կարծել, որ այնքան կարճ միջոցում, այն էլ պարսկական տիրապետութեան ժամանակ, հասարակական խմբերը իրանց որակը փոխէին զգալի կերպով: Պռօչեանը իւր վէպերում պատկերացնում է մի քանի այդպիսի հոգևորական դէմքեր, և հերոսներից մէկի բերանով նկատում, որ նրանք աւելի խիստ էին վարում գիւղացիների հետ, քան պետական պաշտօնեաները: Շատ բնական է, որ ժողովուրդը, գլխաւորապէս գիւղացիութիւնը պէտք է դժգոհութիւն, երբեմն և ատելութիւն արտայայտէր դէպի հոգևորականութիւնը, որ հանդէս էր գալիս իբրև հարկաւու դասակարգ:

Տնտեսական անկմանը ուղեկից էր մտաւոր անկումը: Այս շրջանին վերաբերող գրուածքները շատ մօտյլ գոյներով են պատկերացնում այն ժամանակուայ բարձր ու ստորին հոգևորականներին: Չկար այլ ևս այն գրասիրութիւնը, այն հմտութիւնը, որ յատուկ էր հին հայ հոգևորականներին, որոնց ձեռքում կենդրոնացած էր գրականութիւնը, և որոնք ինքնուրոյն ու թարգմանական բազմաթիւ երկերով ճոխացնում էին հայրենի գալրութիւնը: Արովեանը այն ժամանակուայ մասին նկատում է.

«Այբբենը մեր միջումը դաբով (պարանով) էին բլունում և գիւլով վէր քցում»: *)

*) Խաչատուր Աբովեան «Վերք Հայաստանի», Թիֆլիս, 1908. Հրատ. Բագուայ Հայ. Կուլտուր. Միութեան: Յատուցարան հեղինակի երես Ը. 1

Էջմիածնի վանքում քչերն էին յայտնի իբրև «գիտնականներ», իսկ մնացած մեծամասնութիւնը համարեանոյն տատիճանի վրայ էր գտնուում, ինչ որ գիւղական քահանաները, իսկ վերջիններս գրութեան մասին լիովին գաղափար կազմելու համար բաւական է կարգաւ Աբովեանի վէպի հետեւեալ հատուածը, որի մէջ երգեծանքն ու կարեկցութիւնը խառնուած են իրար»

«Գրի սին ու սիպտակը տէրտէրներն էլ բռանց (հազիւ) էին ջոկում, տւետարան կարդալիս հազար անգամ եա չէջմակը դգում, եա տիրացվի, մղգսու վրայ բարկանում, եա գրակալը դօշներին քաշում, եա գլուխ, երես գրքի միջումը կորցնում, մէկ պստիկ մօմ էլ ձեռներն առնում, եա մօնթի գլխին խփում, որ մօմը դուզ բռնի: Շատ անգամ էլ սրդիանց որդի մէկ վիս, անմարս, դժարատամ, գլուխ կոտրող բառ էլ սր չէր ռաստ դալիս, հէնց գիտես թէ սատանի թամբը կորաւ, շատ կռահալուցը, մօմը մօտ բռնելուցը եա գիրքն էր էրուում, եա նրա միրուքը: Ամա էսպէս բառեր վարաւուրդ էին արել, մօտանալիս կամ գլխովն էին պտըտում, կամ մէկ գիրն առնում, միւսը կուլ տալիս, եա թէ չէ ՄԲ-ը սուրբ կարդալու տեղ սօխ կամ սխտոր առնում, ՄԴ-ը սաղմոս առնելու տեղ՝ դօրադ, ու ժամ օրհնողն էլ եա չօռ էր առնում, եա չէ լսում, Մէկ գիր պակաս ժամանակին հօ Աստուած հեռու տանի, ժամ ու ժողովուրդ, տէրտէր, տիրացու իրար գլխով էին դիպչում, ամեն բերնից էնպէս մէկ խօսք էր դուս դալիս, որ զուռնի փոխանակ դափ էին ածում, մի տեղ ցխաւելը եա քշոցը կարգացողի ձեռը տալիս, տպողին օրհնում, կազմողին գովում ու գէջգանդէջ (վերջ ի վերջոյ) պրծնելիս Աստծուն էնքան իրանց հոգու համար շնորհակալութիւն չանում, որքան գրքից, աւետարանից ազատուելու խաթեր»...*)

Սրանց վերայ եթէ աւելացնենք նաև այն, որ նրանք գժուարութեամբ էին տեղի տալիս նոր կուլտուրայի պա-

*) Խաչատուր Աբով. եր. 49—20.

հանջներին, որովհետեւ շահագրգռուած չէին այդ կուլտուրայի ներմուծումով, — ապա կարծում ենք, պարզ կը լինի այն ժամանակուայ հոգեւորականութեան գրութիւնը և գիրքը ժողովրդի առաջագիմութեան գործում:

III

Երկրորդ դասակարգը վաճառականութիւնն էր:

Հայոց պատմութեան համար շատ մեծ, նոյն իսկ վճռական նշանակութիւն է ունեցել այս դասակարգի երեւան գալը, որը բոյն դնելով Եւրոպայի, Թուրքիայի, Ռուսիայի, Պարսկաստանի և Հնդկաստանի շահաստան քաղաքներում՝ համեմատաբար զօրեղանում է անտեսապէս և պատճառ դառնում՝ Հայոց նոր քաղաքակրթութեան զարգացման: Տպագրութիւնը, գրականութիւնը, յետոյ և մասուլը զարգացան այդ կենդրոններում: Առաջին անգամ այս դասակարգը շփուելով ու մրցելով օտար կրթուած, ախոյեանների հետ՝ պէտք է զգար իւր և իւր հայրենակիցների մտաւոր սնանկութիւնը և խորհէր այդ մասին: Այս գիտակցութեանը հետեւում է հայ հարուստների ձեռքով մի շարք դպրոցների բացումը Մոսկուայում, Աստրախանում, Վենետիկում և այլն: Թուրքիայի քաղաքներից Զմիւռնան ու Պօլիսը, որոնք տաճկահայ վաճառականութեան ամենանշանաւոր կենդրոններն են, իրանց բարբառը դարձնում են գրական լեզու: Ռուսիայում յաղթող է հանդիսանում Արարատեան բարբառը միայն ու միմիայն շնորհիւ այն հանգամանքի, որ ռուսահայ ամենանշանաւոր առևտրական կենդրոնները — Աստրախանը, Մոսկուան և մանաւանդ Թ/Ֆլիսը նրա լեզուական կուսակիցներն էին: Անկասկած Արարատեան բարբառը երբէք չէր յաղթանակի արեւելքում, եթէ անտեսապէս զարգացած կենդրոնները արևմտախօս լինէին: Կարելի էր դեռ երկար շարունակել վաճառականութեան և կուլտուրայի զանազան կողմերի զարգացման կապը, բայց մենք բաւականանանք այսքանով և ուշադրութեան առնենք, հետեւել իրողութիւնը:

Գուցէ ընթերցողը ինքն էլ նկատեց, որ վերոյիշեալ բոլոր նշանաւոր վաճառային կենդրոնները գտնուում են բուն երկրից դուրս։ Բնականաբար կարելի է հետաքրքրուել թէ ինչու է այդպէս։ Կուլտուրայի՝ հայրենիքից դուրս զարգանալը պատահականութեան արդիւնք է, թէ մի ուրիշ պատճառ էլ դոյութիւն ունի։ Պատճառը երկրում տիրող քաղաքական հանդամանքներն էին, որոնք թոյլ չէին տալիս, որ վաճառականութիւնը զարգանայ ներսում։ Դեռ մինչև այժմ էլ բուն երկիրը չունի այնպիսի քաղաքներ, որոնք կարողանային մրցել հայրենիքից դուրս գտնուող հոյ առևտրական կենդրոնների հետ։

Հոյ հասարակութեան սոցիալական խմբերի փոխյարաբերութիւնը ճիշդ պատկերացնելու համար պէտք է յիշել, որ այն ժամանակամիջոցում առևտրական դասակարգի առանձին ներկայացուցիչների ազդեցութիւնը թէև կարող էր աչքի ընկնող լինել կուլտուրական գործերում, բայց այնուամենայնիւ վաճառականութիւնը իբրև հասարակական մի տարր դեռ իս թոյլ էր։ Այս էր պատճառը, որ նա գրականութեան վերայ չթողեց այն ազդեցութիւնը, ինչ որ պիտի անէր 18-րդ դարի երկրորդ յիսնամեակին։

IV

Երրորդ դասակարգը—գիւղացիութիւնը արդէն վաղուց ազատուել էր բնիկ ազնուականների ծանր, շատ ծանր ճնշումից։ Երկրի զանազան մասերում նա իւր հողի տէրն էր և միմիայն հարկերով էր կապուած տիրող ազգերի կառավարութեան հետ։ Որքան էլ որ ծանր լինէին օտարների ճնշումները, այնուամենայնիւ գիւղացիք իրենց տընտեսապէս աւելի թեթեւացած պիտի զգային, քան նախկին ֆէոդալների իշխանութեան ժամանակ։^{*)} Որ գիւ-

*) Խօսելով հին հայերի մասին՝ Վահան վարդ. Բաստամեանը նկատում է. «Մենք չենք տեսնում ժողովրդի կողմից մի նշան հարստութեան»։ Մխիթար Գոշի «Դատաստանադերը Հայոց» Վաղարշապատ, 1880. Յառաջարանութիւն հրատարակչի. եր. 65.

դացիութիւնը չառ թշուառ գրութեան մէջ չէր գտնուում, ցոյց է տալիս Աքովեանի վկայութիւնը իւր հայրենակիցների մասին, որոնք անմիջապէս Երեւանի սարգարի քթի տակ լինելով բնականաբար աւելի ենթակայ պիտի լինէին պարսիկների կեղեքումներին: Չնայած վերջին հանգամանքին՝ ահա ինչ ենք կարգում Քանաքեռցոյ մասին «Վէրք հայաստանի»ում:

«Տունն ու շիրախանէն հաղար բարութիւնով լիքը՝ տրաքում էին, ու Աստուծոյ հոգի կար միջներում. մէկ օձի ձուն էր պակաս նրանց տանիցը: Գինին կարասներով շարած, ամբարը հացով լիքը, կթի կոմն ու դոմէշները՝ ֆօթ ու ձազը տակըներին՝ դոմումը կապած, քեահլան ձին թաւումը, գութանը դռանը լծած, մառանը եմիշով, կախանով, տանն ու խնձորով խլթխլթում՝ և մտնողին հաղը տեղն ու տեղը բռնում, շշմացնում էր: . . . Որը էրկու որը երեք բաղ ունէր, նոքար, հօտաղ դռանը հաղիւր, ու տան ներսն ու պուճախը գրմբում էր: Կարասներով կոշակ, կճճներով պանիր ու զաւուրմա, տքաշներով զոխ, բոխ, ողորմակօթ, բղըղներով եղ ու կարագ, մոթալներով պանիր. — ծո՛վ, ի՛նչ տուն: Տասը զոնաղ որ էն սհաթը նրա դռանը վէր գային, սաղ ամիս ուտէին, խմէին, կատրէին, ջարդէին, փչացնէին, նրա տան խէրն ու բարաքեաթը հո՛ կար, հո՛ կար: . . . Շատը սուրւոյով ոչխար էլ էին պահում: . . . Նրանց կնանոնցը որ մտիկ տայիր, խելքդ կերթար, խասի ու զուժաչի միջում կորած էին: . . . Ամեն մէկի կնիկն ու աղջիկը հէնց իմանաս խանդաղա ու բէգդադա րլէր: »*)

Այն ժամանակուայ գիւղացիների տնտեսութեան ուսումնասիրութիւնը շարունակելով հանգիպում ենք խոշոր նշանակութիւն ունեցող հետեւեալ փաստին. այն է, որ 19-րդ դարի առաջին տասնամեակների ընթացքում գիւղերում տիրում է փակ տնտեսութիւնը, մի տնտեսութիւն, որի արտադրած նիւթերը ընդհանրապէս չու-

*) «Վէրք հայաստանի» եր. 54—56:

կայի երես չեն տեսնում. այլ պահում են սեփական կարիքներին բաւարարութիւն տալու համար. Այս հաստատում է դարձեալ Արովեանը: Թէեւ սա մի տեղ յիշում է. «Էնպէս մարդ կար, որ տարէնը էրկու հարիր, իրեք հարիր լիտր տանձ, խնձոր, ծիրան ծախում էր».*)— որով կարծէք թէ հակասում է մեր առածին, բայց հէնց թի՛չ յետոյ շատ սրաշ գրում է.

«Մէկ փարի բան բազարիցը տուն չէր գալ, բացի իրանց հագնելու շորիցը. էն էլ կտաւ, շապկացու, չուխացու շատը հարսներն էին ու աղջկերքն էին նրանց համար մանում, գործում, կարում».**)

Պարզ է, որ իրերի այսպիսի դրութիւն կարող է գոյութիւն ունենալ այնտեղ, որտեղ անբաւարար փակ տնտեսութիւնն է. Գիւղը գեռ շատ չնչին կապերով է աղգւում՝ քաղաքից:

Մի ուրիշ գիծ: Տնտեսութեան այսպիսի դրութեան ժամանակ գիւղում՝ գեռ կս պահպանած է լինում՝ իւր կենսունակութիւնը նահապետական մեծ գերդաստանը:

«Շատը չորս—հինգ հարսն ունէր տանը», = ասում է հեղինակը:***)

■ . Թաղէս Աւղալբէգեան

(Շարունակելի)



*) «Վերք Հայաստանի», եր. 55:

**) Նոյնը, եր. 55:

***) Նոյնը, եր. 55: